տատեարց՝ բողոք բարձեալ աղաղակէին. թէ ահա կորեան դրամքն մեր. ապա հանին 'ի վաճառ զմնացեալ անօթս եկեղեցւոյ, զորս եղեալ էին 'ի գրաւի՝ 'ի ձեռն Հրէից։ Եւ ոմանք 'ի պարտատեարց դնացեալ 'ի վանս՝ կապէին զերիվարս իւրեանց 'ի կոչնակէ և 'ի դրանց եկեղեցւոյն, և տային կրծել զնոսա և տաշել։ Փակեցան դրունք եկեղեցւոյ յահէ պարտատեարց և խափանեցան պաշտօնք եւ պատարագք, 'ի մոռացօնս եղեն սահմանք վանականութեան և կրօնաւորութեան. զի տեղակալք կանամբք, որդւովք և դստերօք պերճացեալ ճոխանային՝ օտարացեալք յԱստուածային օրինաց՝ և 'ի կարգաց պարկեշտութեան. Թողին զեկեղեցական արարողութիւնս եւ զկարգաւորութիւն հանդիսաւոր Թափօրաց. եղեալ նշաւակ եւ այպն կատականաց առաջի օտարաց, և առեալ յափշտակութեան ազգային իրաւանց։ Համարձակեալ այնուհետեւ պարտատեարց՝ դիմէին 'ի սենեակս միաբանաց հանդերձ զինուորօք՝ խորտակէին զդրունս և զլուսամուտս, և զգիշերն ողջոյն շրջէին սենեակ 'ի սենեկէ, և ոմանք այսր և անդր 'ի դարանի նստէին, հայհոյէին և Թքանէին յերեսս ծերունեաց. ապտակէին և կռփահարէին՝ և կալեալ զհերացն գարշէին արտաքս, և յափշտակէին զոր ինչ միանգամ գըտանէին անդ։ Եւ յաւուրս կիւրակէից 'ի բանալ եկեղեցւոյն՝ դիմէին անդր և ելանէին մինչեւ 'ի բեմն յափշտակել զսկիհն 'ի ձեռաց նուիրագործողին, եւ այսպէս հասեալ էր ազգ Հայոց յետին անարգութիւն, զի 'ի սմին ժամանակի 'ի նախատինս համարեալ էր յերուսաղէմ անուանդ Հայ։

Իրրեւ տեսին պարտատեարք, թէ ոչ գոյ այլ եւս յոյս առնլոյ զդրամս իւրեանց, զի սպառեցաւ ամենայն ինչ, հանին 'ի Կոստանդինուպօլսոյ հրաման Արքունի վաճառել զամենայն կալուածս, և առնուլ զպարտսն։ Հ. Մ. Զամչեան յաւելու ասել, զբնակարանս և զվանս Ս. Յակոբայ. Հատ. Գ. Եր. 771։ Սակայն չիք այս 'ի պատմութեան Հաննէի և ոչ 'ի ձեռագիրս։

Լուեալ զայս Տեղակալաց, խորհեցան նախ վաճառել զվանս Ս. Փրկչի. զայսպիսի լուր առեալ միաբանաց, որք մնացեալ էին սակաւ թուով, անկան 'ի դրունս պարտա-